ԿՐԹԱԿԱՆ




# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶՈՒՄ Է

*Վրաստանում ներդրումային առաջատար բանկի՝ Galt & Taggart-ի «Ընդհանուր եւ բարձրագույն կրթության ոլորտ»-ի հետազոտության համաձայն, Վրաստանում ուսուցիչների թիվը նվազում է, բայց առաջարկը դեռ գերազանցում է:*

Galt & Taggart-ի փոխանցմամբ՝ ուսուցիչների տարիքը երիտասարդացնելու նպատակով կառավարությունը նրանց համար կենսաթոշակային սխեմա է մտցրել: Այդ ծրագրով թոշակառու ուսուցիչը ստանում է 2 տարվա աշխատավարձ: Արդյունքում, 2018/19 ուսումնական տարվա համեմատ, ուսուցիչների թիվը 2022/23 թվականներին նվազել է 7,5 տոկոսով:

Հանրակրթության ոլորտում դեռեւս ուսուցիչների թվի ավելցուկ կա, չնայած վերջին տարիների կրճատումներին: Արդյունքում, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը 2020 թվականին կազմել է 9,7 տոկոս, 2022 թվականին՝ 10,2 տոկոս:

2022-23 թվականների տվյալներով, Վրաստանի դպրոցներում սովորել է 633,3 հազար աշակերտ: 2027/28 ուսումնական տարում ակնկալվում է 647,3 հազար աշակերտի աճ՝ պայմանավորված 2014-18 թվականներին նորածինների թվի աճով:

# ՎՐԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՒՄ Է ՇՈՒՐՋ 25 ՀԱԶԱՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ

***Galt & Taggart-ի ուսումնասիրության համաձայն, վերջին 12 տարիների ընթացքում վրացական բուհերում օտարերկրյա ուսանողների թիվն աճել է 20 անգամ:***

Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում այսօր սովորում է օտարերկրյա մոտ 25,1 հազար քաղաքացի: 2022/23 ուսումնական տարում վրացական բուհերի ուսանողների ընդհանուր թվի 15,2 տոկոսը կազմել են օտարերկրյա ուսանողները:

Օտարերկրյա ուսանողների մեծամասնությունը Հնդկաստանից է՝ 52,1 տոկոս, Հորդանանից՝ 8,7 տոկոս եւ Իսրայելից՝ 5,5 տոկոս:

Օտարերկրացիների 74,6 տոկոսը սովորում է մասնավոր բուհերում:

ԹԱՏՐՈՆ



# ԱԽՄԵՏԵԼՈՒ ԹԱՏՐՈՆՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՎԵՐՋԻՆ ՍՑԵՆԱՐԻ՝ «ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՓԱԿ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ

***2024 թվականին նշվելու է թբիլիսահայ աշխարհահռչակ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակը:***

***Երեւանում արդեն կազմավորվել է հոբելյանական կառավարական հանձնաժողով, մշակվում է միջոցառումների ծրագիր:***

***Իր աշխարհահռչակ համաքաղաքացու հոբելյանին է պատրաստվում նաեւ Թբիլիսին, եւ դրա վկայություններից մեկը հուլիսի 28-ին Թբիլիսիի Սանդրո Ախմետելու անվան պետական թատրոնում մեծն կինոռեժիսորի վերջին սցենարի հիման վրա բեմադրված «Խոստովանություն» թատերական ներկայացման փակ ցուցադրումն է:***



Բեմադրության ռեժիսորը, Սանդրո Ախմետելու անվան թատրոնի գլխավոր ռեժիսոր Իրակլի Գոգիան է, նկարիչը՝ Իռենա Օհանջանովան:

Ինչպես «Վրաստանի» հետ զրույցում նշեց **Իռենա Օհանջանովան**, ներկայացմանը ներգրավվել են թատրոնի այնպիսի ճանաչված դերասաններ, ինչպիսիք են Գիորգի Գասվիանին, Նինո Ցիմակուրիձեն, Էլենե Բեժիաշվիլին, Գիորգի Փիրանիշվիլին, Բորիս Ղլոնտին, Ջորջ Դվալիշվիլին եւ Անանո Գուլեդանին:

- Ինչպես գիտեք, կյանքի վերջին տարիներին Սերգեյ Փարաջանովը նկարահանում էր ինքնակենսագրական «Խոստովանություն» ֆիլմը, որը, սակայն, անավարտ մնաց: Նա կյանքից հեռացավ՝ չհասցնելով իրականություն դարձնել իր բազմաթիվ մտահղացումները: Կյանքի վերջին օրերին, Թբիլիսիի իր տանը անկողնուն էր գամված, երբ որոշեց տեղափոխվել Հայաստան, որտեղ էլ՝ վախճանվեց: Փարաջանովի «Խոստովանություն» սցենարի բեմականացմամբ մենք մեր հարգանքի տուրքը մատուցեցինք մեծն թբիլիսցուն, ով, չնայած ճնշումներին ու արգելքներին, հավատարիմ իր կոչման ու համոզմունքներին նոր շունչ հաղորդեց վրաց կինեմատոգրաֆիային, նոր ուղղություն ձեւավորեց համաշխարհային կինոյի ասպարեզում,- ասաց «Վրաստանի» հետ զրույցում Իռենա Օհանջանովան:

ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ

# ՍԵՅՐԱՆ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ՝ ՀԱՄԵՍՏ ՈՒ ԻՐ ԳՈՐԾԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԴ...

*Սեյրան Կյուրեղյան. այս անունը քաջ հայտնի է Նինոծմինդայի մունիցիպալիտետում: Աշխատանքային բազմամյա գործունեության ընթացքում Սեյրանը հարգանքի եւ սիրո է արժանացել որպես հմուտ մանկավարժ, Նինոծմինդայի տարածքային ընտրական հանձնաժողովի երկարամյա նախագահ...*

*Այսօր Սեյրան Կյուրեղյանը, ինչպես ինքն է խոստովանում, զբաղվում է իր ամենասիրած գործով՝ երկրագործությամբ, հող է մշակում, բերք աճեցնում...*



Հեռախոսազանգիս պատճառը հանդիպման համար պայմանավորվելն էր ընտրական համակարգում կատարված փոփոխությունների մասին զրուցելու համար:

Հարցիս՝ արդյոք աշխատավայրո՞ւմ է, պատասխանեց.

- Լուսին ջան, սարերում եմ, վարուցանքի հետ, չէ՞ որ ես հողագործ մարդ եմ:

Ձայնի երանգը վկայում էր, որ այդ պահին երանելի ժպիտ կար դեմքին: Գլխումս անմիջապես նոր միտք ծագեց: Հերթական ակնարկիս գաղափարը պատրաստ էր: Որոշեցի մեր հանրությանը քաջ հայտնի անհատին այս անգամ ներկայացնել լրիվ այլ դիտանկյունից, ո'չ որպես բազմավաստակ մանկավարժի, եւ ո'չ էլ որպես Նինոծմինդայի տարածքային ընտրական հանձնաժողովի երկարամյա նախագահի, այլ... մայր հողից շունչ առնող, նրա սիրով ապրող մարդու, ով իր տարիների վաստակի ընթացքին զուգահեռ, գրքի ու գրչի հետ միասին ձեռքին ունեցել է գյուղատնտեսական տարբեր գործիքներ, հաջողությունների հասել այդ բնագավառում:

Սեյրան Կյուրեղյանը մանկավարժական գործունեությունն սկսել է շրջանի Վլադիմիրովկայի 8-ամյա դպրոցում, 1968 թվականից: Այնուհետեւ տեղափոխվել է Փոկայի միջնակարգ դպրոց, զուգահեռ ընտրվել է Փոկայի Կամոյի անվան կոլտնտեսության կոլվարչության նախագահ: 1993-ից տնօրինել է Գորելովկայի միջնակարգ դպրոցը, 2002-ից Նինոծմինդայի տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահն է:

Գյուղատնտեսական աշխատանքներին ծանոթ է եղել տակավին մանկուց:

- Հողը պետք է մշակել, լեզուն հասկանալ: Հողը սիրում է, երբ իր հետ հաշվի են նստում: Պետք է սեր ու ջերմություն փոխանցել հողին, քրտինք խառնել հողին ու հողից կյանք ստանալ,- ասում է նա: Գյուղատնտեսության երկու ճյուղերն էլ հավասարապես հոգեհարազատ են նրան՝ ե'ւ հողագործությունը, ե'ւ անասնապահությունը:

- Ես բնություն սիրող մարդ եմ: Գյուղատնտեսությունը շատ մաքուր, հետաքրքիր ասպարեզ է: Բնությունը ագնիվ կանոններով է շարժվում, եթե նվիրվում ես, լավ արդյունք ես ունենում,- շարունակում է նա:

Այս տարի 180 հա ցանքատարածք է մշակել՝ գարի, վիկ, սիսեռ... Մեր հանդիպման ժամանակ ծավալված զրույցի ընթացքում համոզվեցի, որ Սեյրան Կյուրեղյանը ոչ միայն համեստ ու իր գործին նվիրված մարդ է, այլեւ հետաքրքիր զրուցակից, որի կարծիքը գյուղատնտեսության մասին հետաքրքիր է թեկուզ այն պատճառով, որ կրկնվող չէ ու հիմնված է երկարամյա փորձի վրա:

Կյուրեղյանի ֆերման ընտանեկան բիզնես է, որի հիմնադիրն ու ղեկավարը պատմում է, որ 1993-ին որոշել են Գորելովկայում ընտանեկան ֆերմա հիմնել, սկսել են 7 գլուխ տավարից: Անասնապահական աշխատանքներում ընդգրկված է եղել ողջ ընտանիքը: Երբ անասունների գլխաքանակն անցել է 35-ից, արդեն աշխատողներ են վարձել: Այն այսօր մեր տարածաշրջանի ամենամեծ ֆերման է, որն ունի 280 կթու կով, 28 երինջ, 100 հորթ, 45 մոզի, 15 ցլիկ: Նրանց ֆերմայի կովերը սիմենտալ ու խայտաբղետ ցեղերի խառնածիններ են:

- Կաթնատվությամբ եւ ապրանքային նպատակների համար երկուսն էլ հարմար են եւ իրար չեն զիջում: Դրսի ցեղերի հետ տրամախաչումը օգնել է բարելավել ցուցանիշները թե' քանակական, թե' որակական տեսանկյունից,- ասում է նա:

Ունեն ավելի քան 40 աշխատող՝ կթվոր, հովիվ, անասնապահ, մեխանիզատոր... Այնուամենայնիվ, լուսաբացին՝ 05:30-ից պարոն Կյուրեղյանը ֆերմայում է, հետո՝ ցանքատարածություններում: Երեկոյան եւս, տարածքային ընտրական հանձնաժողովում աշխատանքային օրն ավարտելուց հետո, կրկին տնտեսությունում է, անձամբ է մասնակցում բոլոր աշխատանքներին՝ ընդհուպ մինչեւ անասնաբուժական սպասարկում: Տնտեսության հետ կապված աշխատանքներում միշտ նրա կողքին են որդին՝ Սմբատը, եւ թոռը՝ Սեյրանը: Վերջինիս, պապի խոսքով, գենետիկորեն փոխանցվել է սերն ու հետաքրքրությունը դեպի գյուղատնտեսությունը:

Բազմափորձ ֆերմերի կարծիքով, լավ արտադրանք ունենալու համար բավարար չէ լավ որակի կենդանիներ ու կեր ունենալը: Գոհացուցիչ արդյունք ունենալու համար պետք է լավ տեխնոլոգիա, անասնաշենքեր, բարձր կերապահովվածություն ու լավ անասնաբուժական սպասարկում: Նրա ֆերմայում 280 կթու կովից օրական ավելի քան 3000լ կաթ են ստանում: Կաթը վերամշակում եւ կաթնամթերքն արտադրում են միջազգային չափորոշիչներին համապատասխան գործարանում, պանիրը մթերում նորագույն սարքավորանքներով հագեցած պահեստում: Շուկայի մասին խոսելիս ֆերմերը սառն է դատում՝ առանց սուբյեկտիվության: Կաթնամթերքի իրացման խնդիր չունեն: Նրանց արտադրած պանիրը պայմանագրով «Ուրավելի» գործարանն է վերցնում եւ վերավաճառում: Պետության կողմից էլ ունի արտոնագիր, երեք տեսակի պանիր՝ վրացական չանախ, լոռի եւ սուլուգունի, արտերկիր արտահանելու համար:

Գյուղատնտեսական սարքավորանքներ ու պարագաներ, տեխնիկա եւ այլ անհրաժեշտություններ ձեռք բերելու համար օգտվում է նաեւ գյուղատնտեսական ոլորտին կառավարության աջակցության պետական ծրագրերից: Այժմ մտադրվել է վարկ վերցնել եւ կթելու արհեստական սարքեր գնել, որոնց կիրառումը, նրա կարծիքով, կովերի հիվանդությունները փոքրագույնի կհասցնի:

Աննկարագրելի ոգեւորությամբ ու անսահման սիրով է համակվում Սեյրան Կյուրեղյանը իր տնտեսության մասին խոսելիս: Հեռանկարային է համարում մեր շրջանում կտրուկ նվազած ոչխարաբուծության զարգացման հնարավորությունները:

- Աշխատանք ունեմ, բայց հող եմ մշակում, ցորեն ցանում, կով եմ պահում: Օրական 18 ժամ աշխատում եմ, արդյունքից էլ գոհ եմ,- ասում է նա: Ապագայի հանդեպ էլ լավատես է եւ ամեն ինչի հիմքում դնում է աշխատանքն ու աշխատասիրությունը:

***ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ***

*Նինոծմինդա*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❁ ԱՅԼԱԶԱՆ ❁ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԾԻԾԱՂԸ՝ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱ՞Ն



***Շատերից եմ լսել՝ պետք չէ ամեն ինչ սրտին մոտ ընդունել, ընկալել՝ որպես ողբերգություն, որոշակի անտարբերություն ցուցաբերել: Լսել եմ, որ ուրախությունն ու ծիծաղը երկարացնում են կյանքը: Իրոք այդպե՞ս է...***

***Հ.ՍԻՄՈՆՅԱՆ***

***Թբիլիսի***

Փորձնականում ապացուցվել է, որ ուրախ ընկերախմբում անցկացրած ժամանակը ոչ միայն բարձրացնում է տրամադրությունը, այլեւ առողջություն է պարգեւում: Ծիծաղը հրաշալի մարմնամարզություն է: Ծիծաղին մասնակցում է դեմքի, պարանոցի, ուսերի, կրծքավանդակի ու որովայնի շուրջ 80 մկան: Դրա շնորհիվ լավանում է արյան շրջանառությունը, նյութափոխանակությունը: Ամենակարեւորն այն է, որ ծիծաղի ժամանակ օրգանիզմում արտադրվում է մեծ քանակությամբ էնդորֆին, որը մեղմում է ցավը: Մի' վախեցեք, որ ծիծաղից կնճիռներ կառաջանան: Ծիծաղը հարթում է կնճիռները: Ծիծաղն առաձգականություն է հաղորդում դեմքի մկաններին: Միաժամանակ, ծիծաղող մարդիկ վայելում են միջավայրի համակրանքը: Հոգեբանները պնդում են, որ նման մարդիկ ավելի հեշտ են աշխատանք գտնում եւ հասնում հաջողությունների:

ՏԱՐԱԴՐԱՄ

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ՔՐԻՍՏԱՓՈՐ ՏԵՐ-ՍԵՐՈԲՅԱՆԸ ՓՐԿԵՑ ԱՄՆ ՏԱՐԱԴՐԱՄԸ



***Հարգելի խմբագրություն, գիտեմ, որ դոլարը կեղծելու համար շատերն են դիմել տարբեր միջոցների ու հասել մեծ արդյունքների՝ փորձելով հարստանալ: Լսել եմ նաեւ, որ այդ գործընթացը երկար չի տեւել, երբ ոմն Քրիստափոր Տեր-Սերոբյան կարողացել է փրկել դոլարը՝ հատուկ ֆանտիկի միջոցով ստեղծելով պաշտպանիչ միջոց: Գուցե, մանրամասնեք՝ ո՞վ է այդ հայ մարդը, թե ե՞րբ եւ ինչպե՞ս է կարողացել այդ անել:***

***Ս.ՓՆՋՈՅԱՆ***

***Նինոծմինդայի մունիցիպալիտետ***

Իրոք, այդպես է՝ հայ Քրիստափոր Տեր-Մինասյանն է ստեղծել դոլարի պաշտպանիչ միջոցը: Մանրամասնենք՝ ո՞վ է նա եւ ինչպե՞ս է ստեղծել պաշտպանիչ միջոցը:

19-րդ դարի երկրորդ կեսին ամերիկյան ֆինանսական կառավարության համար մեծ գլխացավանք էր դարձել կեղծ դոլարների տպագրության ու պատճենահանման դեմ պայքարը: Ձեղծարարներն ամենուրեք հեշտությամբ կեղծում էին դոլարները նրանց սեւուսպիտակ լինելու պատճառով, որովհետեւ դրանք պատճենահանվում էին տարբեր տպիչ մեքենաներով:

Հարց է առաջանում՝ ի՞նչ կապ ունեն հայերը դրա հետ...

Ծանոթանանք 1854թ. ամերիկյան արխիվներում պահվող փաստաթղթերից մեկի հետ. կեղծ դոլարների հիմնախնդրով զբաղվող ամերիկյան ֆինանսիստ չինովնիկները հենց այդ ժամանակ են հայտարարում մրցույթ՝ նոր միջոցներ գտնել դոլարի կեղծման պաշտպանության եւ կեղծ դոլարների պատճենահանման ու տարածման համար:

Մրցույթում հաղթում է Կ.Պոլսից (այժմ՝ Ստամբուլ) քիմիկոս Քրիստափոր Տեր-Մինասյանը: Նա ծնվել է 1825թ.Կ.Պոլսում: Սովորել եւ ավարտել է Ամերիկայի Հելսկյան բժշկական համալսարանը, որտեղ ուսումնասիրում էր քիմիա, բժշկություն եւ աստվածաբանություն:

Դոլարի պաշտպանության համար նա ստեղծում է պաշտպանական կանաչ գույնը, որը հեշտությամբ չէր պատճենահանվում եւ հոգեբանական տեսանկյունից վստահություն էր ներշնչում դոլարի նկատմամբ:

Տեր-Սերոբյանը դեռ կարողանում է ստանալ դեղնավուն հեղուկ զանգված, որը թղթի վրա քսելիս ներծծվում էր՝ ստանալով կեղտականաչավուն գույն: Ահա այս գույնն էլ մեկուկես դար ծառայում է՝ որպես դոլարի պաշտպանիչ միջոցներից մեկը:

Նման արժեքավոր հայտնագործության համար Քրիստափոր Տեր-Մինասյանն արժանանում է ԱՄՆ կառավարության մեդալի, իսկ թուրքական սուլթան Աբդուլ Մեջիդը՝ շնորհակալական նամակի, որում Օսմանյան Թուրքիային ամերիկացիները խորհուրդ էին տալիս հպարտանալ նման տաղանդավոր իրենց քաղաքացիներով:

Տեր-Մինասյանին հանձնվում է այդ ժամանակաշրջանի համար ոչ փոքր գումար՝ վեց հազար ամերիկյան դոլար, որը նա ծախսում է ուսման վրա. ավարտում է բժշկական ակադեմիան ու դառնում բժիշկ:

1860թ. հայ գյուտարարը վերադառնում է Կ.Պոլիս, որտեղ էլ զբաղվում է մարդկանց առողջությամբ ու բուժմամբ եւ մինչեւ կյանքի վերջը աշխատում արքունական կալվածքում՝ որպես բժիշկ: Քրիստափոր Տեր-Մինասյանը մահացել է 1874 թվականին Կ.Պոլսում:

Հպարտությամբ փաստենք, որ հայի կողմից ստեղծված ներկի բաղադրությունը մինչեւ այժմ որպես գաղտնիք պահվում է ԱՄՆ Բյուրոյում:

***Պատրաստեց***

***ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

## ԵԹԵ ԵՐԵԽԱՆ ՉԻ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ



***«Չորս տարեկան երեխա ունեմ, թվում է՝ փոքր է, սակայն ոչ մի կերպ չեմ կարողանում ինձ ենթարկել, միշտ իր ուզածն է անում եւ երբեք չի լսում, երբ նրան ինչ-որ բան ենք ասում անել, որը նրա սրտով չէ, չի ենթարկվում, իսկ երբ արգելում ենք անել այն, ինչ ինքն է ուզում, հիստերիա է բարձրացնում...»,- խմբագրության էլեկտրոնային փոստով ստացված Գ. Վ.-ի նամակի այս տողերը դարձան թեմայի մանրամասն ուսումնասիրության պատճառ: Ասելով՝ «ընդամենը երեխայություն է, մի քիչ մեծանա, կանցնի», ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մեր կողմից անցկացված ուսումնասիրության արդյունքները:***

Եթե երեխան չի ցանկանում ենթարկվել, ապա միանգամայն հնարավոր է նրան խելքի բերել, ընդ որում, ձեզ հարկավոր չէ բռնել գոտին կամ երեխային պահել ամոթալի անկյունում՝ անհնազանդության խնդիրը կարող է լուծվել «բռնակցային» ճանապարհներով:

### Ի՞ՆՉՆ Է ԱՌԱՋԱՑՆՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Անհնազանդությամբ երեխաներն իրենց բողոքն են արտահայտում իրականության բացասական փաստերի դեմ: Եթե երեխան չի ենթարկվում, նա պատճառ ունի: Երեխայի անհնազանդության պատճառները ներառում են.

**Տարիքային ճգնաժամ.** Նրանք կարող են բացատրել, թե ինչու երեք տարեկան երեխան չի ենթարկվում, այդ իսկ պատճառով վեցամյա երեխան իրեն վատ է պահում:

**Չափից դուրս պահանջներ.** Մշտական արգելքները ցանկացած տարիքում մարդու մոտ բողոք են առաջացնում: Սահմանափակումները պետք է լինեն ողջամիտ եւ տրամաբանական: Գերադասելի է երեխային բացատրել, թե ինչու չպետք է խաղալ լուցկու կամ հոսանքի վարդակով, բայց մի' արգելեք նրան ակտիվ լինել, ծիծաղել, վազել ու երգել:

**Ծնողական վարքի անհամապատասխանություն.** Ձեր տրամադրությունը չպետք է ազդի պատժի կամ պարգեւատրման վրա: Անհրաժեշտ է նաեւ, որ երկու ծնողներն էլ հետեւողական լինեն որոշումների եւ հայտարարությունների հարցում: Եթե հայրիկն ասում է «դու կարող ես», իսկ մայրիկն ասում է «դու չես կարող», երեխան ապակողմնորոշվում է, սկսում է գործել իր ուզածով:

**Արգելքների լիակատար բացակայություն.** Եթե չկա վերահսկողություն, ապա ամեն ինչ հնարավոր է: Երեխայի քմահաճույքին անձնատուր լինելը տանում է ամենաթողության զգացումի, իսկ արդյունքում՝ փչացման ու անհնազանդության:

**Խոստումները չկատարելը.** Եթե ձեր երեխային ինչ-որ բան եք խոստացել, լինի դա վարձատրություն, թե պատիժ, հետեւեք դրան: Հակառակ դեպքում երեխան կդադարի հավատալ ձեզ եւ կանտեսի ծնողների բոլոր խոսքերը: Ինչո՞ւ հնազանդվել, եթե, այնուամենայնիվ, խաբված ես:

**Անարդարություն.** Այն ծնողները, ովքեր չեն լսում երեխայի փաստարկները, դրա դիմաց անհարգալից վերաբերմունք կունենան:

**Ընտանեկան կոնֆլիկտներ.** Անհնազանդ երեխաները կարող են արձագանքել ընտանիքում անկայուն հոգեբանական պայմաններին եւ ուշադրության պակասին:

Ծնողների ամուսնալուծությունը մեծ սթրես է երեխայի համար: Նա իրեն կորած է զգում, չգիտի, թե ինչ անել նման իրավիճակում: Կարեւոր է բացատրել, որ երկու ծնողներն էլ սիրում են նրան, եւ որ հակամարտությունը երեխայի մեղքը չէ:

### Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԵՐԵԽԱՆ ՉԻ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ

Ցավոք, առանց պատժի երեխային մեծացնել հնարավոր չէ: Բայց դրանք պետք է լինեն միայն լուրջ չարաշահման համար: Իսկ լավ վարքը պետք է ավելի հաճախ պարգեւատրվի, քան պատժվի:

Ֆիզիկական պատիժը հանգեցնում է նրան, որ երեխաները սկսում են դժգոհություն արտահայտել թույլերի նկատմամբ՝ փոքրիկների կամ կենդանիների, փչացնել կահույքը կամ խաղալիքները:

**Այսպիսով, ինչպե՞ս երեխաներին զրկել անզուսպ արարքներից.**

Օգտագործեք հաճույքի սահմանափակումներ: Լուրջ իրավախախտման համար կարող եք երեխային զրկել քաղցրավենիքից, հեծանիվ վարելուց, համակարգչում խաղալուց:

Եթե երեխան չի լսում ձեր խոսքերը, ներդրեք նախազգուշացման համակարգ: «Առաջին անգամ ներվում է, երկրորդը՝ արգելված»: Տուգանքը պետք է անպայման հետեւի երրորդ ազդանշանին:

Հիստերիային կամ քմահաճույքներին պետք է արձագանքել հանգիստ տոնով եւ ոչ մի դեպքում չզիջել ձեր դիրքը:

Անհնազանդության ամենակարեւոր բուժումը երեխայի կարծիքի նկատմամբ հարգանքն է: Տվեք ձեր երեխաներին ավելի շատ ժամանակ եւ ուշադրություն, աջակցեք նրանց գաղափարներին ու դարձեք լավ ընկեր, այլ ոչ թե չար վերահսկող: Այնուհետեւ դուք կիմանաք երեխայի բոլոր խնդիրների մասին եւ կկարողանաք կանխել հնարավոր անախորժությունները:

## Ա Ն Ե Կ Դ Ո Տ Ն Ե Ր

*☺ - Կնոջդ երբեւէ ասել ես, թե ի՞նչ ես մտածում նրա մասին:*

*- Իհարկե, գլխիս այս սպին նման խոստովանության արդյունքն է:*

*☺ - Թանկագինս, միայն մի բառով դու կարող ես ինձ երջանկացնել. Ասա, կամուսնանա՞ս ինձ հետ:*

*- Ոչ:*

*- Սա հենց այն բառն է, որ անչափ երջանկացրեց ինձ:*

*☺ Դե, պատմիր դստրիկս, ամուսինդ ինչպե՞ս է վերաբերվում քեզ:*

*- Շատ լավ, ինչ ցանկանում եմ, գնում է:*

*- Հիմար, ուրեմն քիչ ես ցանկանում:*

*☺ - Սկսել եմ բանաստեղծություններ գրել:*

*- Եվ ինչպե՞ս է, ստացվո՞ւմ է:*

*- Կիսով չափ՝ գրելը գրում եմ, սակայն չի հանգավորվում:*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



*☞ Դաժանորեն կյանք նետվելով՝ պտուղը ստիպված է մոռանալ բավարարման ամենասիրած միջոցները եւ հարմարվել նորերին: Այդ դաժան խաղը կրկնվում է զարգացման յուրաքանչյուր նոր փուլ անցնելիս:*

***ՖԱՐԿԱՇ ՖԵՐԵՆՑ***

*☞ Օգուտը ոչ թե շատ, այլ լավ գրքերի մեջ է:*

***ՍԵՆԵԿԱ***

*☞ Իրենից դժգոհ լինելը խելացի կյանքի անհրաժեշտ պայմանն է: Միայն այդ դժգոհությունն է մղում աշխատել եսի վրա:*

***ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ***

*☞ Առանձին կանայք անհաղթ են, քանի որ ոչ մեկը չի ցանկանում նրանց հաղթել:*

***ԳԱՌՆԻԿ ՄԱՆԱՍԱՐՅԱՆ***

***«Վրաստանի» ընթերցող***

***Բաքումի***

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԿԱ ԵՆ»

*Օգոստոսի 3-ին Հայաստանի կառավարության նիստում երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Ադրբեջանի հետ երկարաժամկետ և կայուն խաղաղության հասնելու հնարավորություն է տեսնում:*



- Ի հեճուկս բոլոր բարդությունների՝ մենք իսկապես երկարաժամետ, կայուն եւ տեւական խաղաղության հասնելու հնարավորություն ունենք: Եվ Ադրբեջանին կոչ եմ անում զերծ մնալ այդ հնարավորությունը նվազեցնելուն ուղղված քայլերից, ինչպես, օրինակ, միջազգային մեխանիզմի շրջանակներում՝ Ստեփանակերտ-Բաքու երկխոսության շարունակական տորպեդահարումը, Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակումը եւ շաբաթվա սկզբին Լաչինի միջանցքից ՄԱԿ-ի կողմից Երեւան տեղափոխվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ Վագիֆ Խաչատրյանի առեւանգումը: Վագիֆ Խաչատրյանին, մյուս գերիներին, պատանդներին, պահվող անձանց ազատ արձակելը՝ խաղաղության օրակարգին հավատարմության տպավորիչ ազդարարում կլիներ,- ասաց Հայաստանի վարչապետը:

# ՎԱՂԸ՝ ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ, ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԿՎԱՌՎԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԻ ՋԱՀԸ

## ԽԱՂԵՐԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ԵՐԵՔ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ 300 ՄԱՐԶԻԿ-ՄԱՐԶՈՒՀԻՆԵՐՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Խաղերի օրակարգում ընդգրկված է 19 մարզաձեւ: Խաղերին կսպասարկի համաշխարհային, միջազգային եւ հանրապետական կարգի շուրջ 500 մրցավար:

Օգոստոսի 5-19-ը կայանալիք Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման պաշտոնական արարողությունը կանցկացվի Գյումրու քաղաքային մարզադաշտում: Համահայկական ամառային 8-րդ խաղերը կանցկացվեն Երեւանում, Շիրակի, Կոտայքի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերում: Խաղերի փակման արարողությունը տեղի կունենա Երեւանում, օգոստոսի 19-ին:

Համահայկական խաղերն անցկացվում են օլիմպիական սկզբունքով՝ 4 տարին մեկ: Առաջին անգամ Համահայկական խաղերն անցկացվել են 1999 թվականին՝ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման նպատակով:

* * *

Օգոստոսի 2-ին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդիպում ունեցավ Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի հետ:

Հանդիպմանը Իշխան Զաքարյանը Հայաստանի նախագահին ներկայացրեց Համահայկական ամառային 8-րդ խաղերին ընդառաջ կատարված նախապատրաստական եւ կազմակերպչական աշխատանքների վերաբերյալ մանրամասները: Քննարկվեցին համահայկական սպորտային միջոցառումը բարձր մակարդակով անցկացնելու վերաբերյալ հարցեր:

* * *

***Հիշեցնենք, որ Համահայկական 7-րդ խաղերին Թբիլիսիի հավաքականը նվաճած մեդալների քանակով, թիմային հաշվարկում, լավագույն հնգյակի թվում էր:***

***Իսկ ինչ վերաբերում է Համահայկական 8-րդ խաղերին, ապա Վրաստանը ներկայացվում է Թբիլիսիի, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի թիմերով, շուրջ 300 մարզիկ-մարզուհիներով: Ընդհանուր առմամբ, 19 մարզաձեւերում Համահայկական 8-րդ խաղերին կմասնակցի 7 161 հազար մարզիկ:***

# ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ 600 ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Ավելի քան 50 երկրներից 18-35 տարեկան 600 սփյուռքահայ երիտասարդներ, համայնքային, գիտական, կրթական, մշակութային եւ այլ շրջանակներից, «Երիտասարդների կողմից՝ երիտասարդների համար» կարգախոսի ներքո, Հայաստանում են. մեկնարկել է առաջին անգամ անցկացվող Ազգային երիտասարդական համաժողովը:*




Համաժողովը կազմակերպվել էր Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից եւ ավարտվեց օգոստոսի 3-ին:

Համաժողովին հրավիրված էին նաեւ 100 բանախոսներ՝ 15-ից ավելի երկրներից:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը, ողջունելով բոլոր ներկաներին, ընդգծեց, որ համաժողովի նպատակը՝ հնարավորություն ընձեռել սփյուռքի հայ երիտասարդությանը՝ մասնակցելու Հայաստանի զարգացման գործընթացին, կապեր հաստատելու եւ հզորացնելու միմյանց, ինչպես նաեւ ոգեւորելու, ընդլայնել իրենց աշխատանքը եւ ներգրավվածությունը համայնքներում:

Ազգային երիտասարդական համաժողովի երեք օրերին ինտերակտիվ եւ ներառական ձեւաչափով անցկացվեցին պանելային նիստեր, քննարկումներ, հանդիպումներ, շնորհանդեսներ, աշխատաժողովներ, ինչպես նաեւ էքսպոներ, կապերի հաստատման ու մշակութային միջոցառումներ:

# ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԸ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՆ ՓՈՔՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

*Հայաստանի փոքր ավիացիայի հիմնադրամը՝ օրերս համագործակցության հուշագիր է ստորագրել Վրաստանի ավիացիայի ակումբի հետ: Նպատակը ոլորտի զարգացման ճանապարհին միմյանց աջակցելն ու ձեռք մեկնելն է: Թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում փոքր ավիացիայի ոլորտի զարգացումը համեմատաբար նոր է: Երկու երկրներում էլ կան դժվարություններ, երկու տեղում էլ կա հաջողված փորձ, մասնագետների ձեւավորված բազա: Ոլորտի գործընկերները որոշել են օգնել միմյանց:*



Հայաստանը պատրաստ է ընդունել Վրաստանի փոքր ինքնաթիռները, վրացի գործընկերներն էլ պատրաստ են տրամադրել իրենց աերոդրոմները: Հուշագրում նախանշված դրույթները կյանքի կոչելու համար Հայաստանի մասնագետները ժամանակ չեն կորցնում: Վրացի գործընկերներին հրավիրել են մասնակցելու օգոստոսի 26-ին Ստեփանավանում կայանալիք խոշոր ավիաշոուին: Մասնակցելուց բացի, տեղում գործնականում մասնագետները կիստակեցնեն հաջորդ քայլերը:

- Մենք ունենք փոքր դպրոց, որտեղ օդաչուներ ենք պատրաստում, ունենք քիչ թե շատ զարգացած ենթակառուցվածքներ, օդանավակայան, 2-4 տեղանոց ինքնաթիռներ, ունենք օդաչուներ, սովորեցնող մասնագետներ: Այնպես որ, մենք նույնպես ասելիք ունենք եւ կարող ենք օգտակար լինել մեր վրացի գործընկերներին,- նշեց Հայաստանի փոքր ավիացիայի հիմնադրամի համահիմնադիր Արմեն Սարգսյանը եւ հավելեց, որ ոլորտի զարգացումը, տրանսպորտային նոր ենթակառուցվածքները մեծ հեռանկարներ կբացեն Հայաստանի համար: Հնարավոր կլինի արագ տեղաշարժվել դեպի հարեւան երկրներ, ինչպես նաեւ Հայաստանի տարածք, նոր ծրագրեր իրականացնել, խնայելով ամենաթանկը՝ ժամանակը:

## ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

***Հուլիսի 29-ին Արցախի Հանրապետության ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը հրաժարական է տվել:***

***Հրաժարականի մտադրության մասին Թովմասյանը հայտնել էր դեռ հուլիսի 28-ին: Նույն օրը Արթուր Թովմասյանը Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանին էր ներկայացրել պաշտոնից իր հրաժարականի պատճառները:***

## «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ 2023» ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

***Ականավոր գիտնականներն ու գործարարները մեկ հարթակում՝ «Գիտության եւ գործարարության օրեր 2023» միջոցառման շրջանակում, կհամախմբվեն՝ խթանելու համար բիզնեսի եւ գիտության փոխգործակցության զարգացումը, գիտության առեւտրայնացման հնարավորությունների բացահայտումը՝ ի նպաստ Հայաստանի տնտեսության հետագա առաջընթացի:***

***Միջոցառումը կանցկացվի դեկտեմբերի 1-2-ը, Երեւանի Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում, որի շրջանակում Հայաստան կժամանի հայտնի գիտնական, գրող եւ փիլիսոփա Նասիմ Նիկոլաս Թալեբը: Միջոցառումը կազմակերպվում է Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի նախաձեռնությամբ՝ համախմբելով գիտնականների, հետազոտողների, գործարարների եւ ներդրողների Հայաստանից եւ ամբողջ աշխարհից:***

## ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

***Հայաստանում Եվրոպական միության քաղաքացիական դիտորդական առաքելությունը ընդլայնում է իր ներկայությունը Սյունիքի մարզում:***

***Առաքելությունը իր հերթական գրասենյակը բացել Սյունիքի մարզում՝ Գորիսում արդեն գործող գրասենյակին ավելանում է Կապանի նորաբաց հաբը:***

***Հայաստանում ԵՄ առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը իր խոսքում ընդգծել, որ մտադիր են Հայաստանում 6 օպերատիվ հաբ ունենալ եւ արդեն մոտ են այդ պլանի իրականացմանը: Նա նշել, որ մինչեւ այս պահը երեք հաբ ունեին՝ Մարտունիում, Ջերմուկում եւ Գորիսում, իսկ հիմա դրանց ավելանում է Կապանի հաբը:***

## ԴԵՊՈԶԻՏԱԳՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑԻՆ ՊԵՏԲՅՈՒՋԵ

***Հայաստանի քննչական կոմիտեի հատուկ հանձնարարությունների գործերի քննության վարչությունում շարունակվում է «Ավտոներկրողներ», «Ավտոներկրողների միություն» եւ «Ավտոներկրող-4» ՍՊ ընկերությունների գործունեության արդյունքում թույլ տրված չարաշահումների դեպքերի առիթով քրեական վարույթով նախաքննությունը:***

***Քննությամբ ձեռք բերված տվյալներով պարզվել է, որ Տ.Հ.-ն, հանդիսանալով պետական գրանցում ստացած վերոնշյալ ընկերությունների գործունեությունը փաստացի ղեկավարող անձ եւ փաստացի սեփականատեր, համաձայնության է եկել ավտոմեքենաների ներմուծմամբ զբաղվող բազմաթիվ ֆիզիկական անձանց հետ, իր ընկերության անվամբ վերջիններիս պատկանող ֆինանսական միջոցներով ավտոմեքենաներ ներկրելու եւ ԵԱՏՄ երկրներ արտահանելու հարցի շուրջ, պայմանով, որ վերադարձման ենթակա ԱԱՀ-ի հիսուն տոկոս գումարը մնալու է իրեն, իսկ մյուս հիսուն տոկոսը տրվելու է ֆիզիկական անձանց: Գործարքի շնորհիվ խարդախությամբ հափշտակվել է 406.596.400 ՀՀ դրամ:***

***Հարկ է նշել, որ Տ.Հ.-ի կողմից խարդախությամբ հափշտակված 406.596.400 ՀՀ դրամից վերականգնվել է նաեւ 30 մլն ՀՀ դրամը, եւ ներկայումս գործուն քայլեր են կատարվում վնասի մնացյալ մասը վերականգնելու ուղղությամբ:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՕԳՈՍՏՈՍ



***6.08.2023 Բարեկենդան Սուրբ Աստվածածնի պահոց***

*Պահքի սկիզբն է, որը նախորդում է Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոներից եւ Սուրբ Աստվածածնին նվիրված տոներից մեկին, այսինքն՝ Սուրբ Աստվածածնի վերափոխմանը: Այս պահքը տեւում է երկուշաբթիից մինչեւ շաբաթ:*

***12.08.2023 Տոն Շողակաթի՝ Սուրբ Էջմիածնի, ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի***

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՃԱՄՓՈՐԴՆԵՐԻ

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՐԹՈՒՂԻ ԹԲԻԼԻՍԻ-ԲԱԹՈՒՄԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ



*«Վրաստանի երկաթուղի»-ն լրացուցիչ երթուղի է սկսում դեպի Բաթումի:*

«Վրաստանի երկաթուղի» ընկերության տեղեկություններով, օգոստոսի 2-ից դեպի Բաթումի լրացուցիչ գնացքը կմեկնի առավոտյան ժամը 10:50-ին, իսկ Բաթումիից Թբիլիսի՝ երեկոյան 18:55-ին:

Տոմսերը կարող եք ձեռք բերել «Վրաստանի երկաթուղի» ընկերության կայքի-էջն այցելելով՝ https://ticket.railway.ge:

ԹԵԺ ԳԻԾ

## ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն* - **112**
*Պարեկային ոստիկանություն* - **112**
*Հրշեջ-փրկարար ծառայություն* - **112**
*Պահակային ոստիկանություն* - **125**
*Գլխավոր տեսչություն* - **126**
*Տեղեկատու բյուրո* - **118 08**
*Քաղաքապետարանի թեժ գիծ* - **272-22-22**
*Առողջապահության նախարարության թեժ գիծ* - **15-05**
*Ժողովրդական պաշտպան* - **299-58-98, 292-24-79**
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն* - **14-81**
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն* - **114, 240-40-04**
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն* - **227-50-40**
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ* - **16 700, (+995 32) 5 000 777**
*Ջրամատակարարման թեժ գիծ* - **293-11-11**
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ* - **(593) 50-42-52**
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո* - **231-03-41, 231-04-21**
*Երկաթուղային կայարան* - **1331, 2199010**
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան* - **(599) 74-73-73**

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

## «A» ԿԱՐԳԻ ՏԱՔՍՈՒ ՎԱՐՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԵԼ Է 35 558 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ



*Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի հավաստմամբ, այս տարվա ապրիլի 1-ից մինչ օրս «A» կարգի տաքսու արտոնագիր ունեցող անձանց տրվել է, ընդհանուր առմամբ, 35 հազար 558 թույլտվություն, որոնց 13,7 տոկոսն ակտիվացված է:*

Թբիլիսիի քաղաքապետը հիշեցրեց նաեւ, որ ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել տաքսիների բարեփոխման երրորդ փուլը, որը նախատեսում է տաքսու արտոնագիր ունեցող անձանց թույլտվության ցմահ փոխանցում:

Ի դեպ, թույլտվության ակտիվացման ժամկետը սահմանվել է այս տարվա ապրիլի 1-ից մինչեւ 2024 թվականի ապրիլի 1-ը:

ՍՊՈՐՏ

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ 31-ՐԴ ԽԱՂԵՐ. ՄԵԿՆԱՐԿԵՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ՓԱՌԱՏՈՆԸ

### ԽԱՂԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ 27 ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ 14 ՄԱՐԶԻԿՆԵՐ




*Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 31-ին Չինաստանի Չենդու քաղաքում անցկացվեց Համաշխարհային համալսարանական ամառային 31-րդ խաղերի բացման հանդիսավոր արարողությունը:*




«Dongan Lake Sports Park» բացօթյա մարզադաշտում տեղի ունեցած միջոցառմանը մասնակցեցին 139 երկրի շուրջ 7000 պատվիրակներ: Խաղերում 18 մարզաձեւերում կխաղարկվի 268 մեդալ:

Մասնակիցների թվում են վրաստանցի 27 եւ հայաստանցի 14 մարզիկներ:

27 մարզիկ-մարզուհիներից կազմված Վրաստանի համալսարանական հավաքականը հանդես է գալիս չորս մարզաձեւերում՝ ձյուդո, ջրագնդակ, ջրացատկ, լող եւ այսօրվա դրությամբ իր ակտիվում արդեն գրանցել է բրոնզե մեդալ: Անկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ այդ մարզաձեւում միջազգային մակարդակով վրացի ջրացատկորդներ Սանդրո Մելիքիձեն եւ Թոռնիկե Օնիկաշվիլին նվաճել են բրոնզե մեդալ:

Համալսարանական խաղերին Հայաստանը ներկայացնող 14 մարզիկներն իրենց ուժերը կչափեն 7 մարզաձեւերում՝ լող, սպորտային մարմնամարզություն, աթլետիկա, ուշու, ձյուդո, տեքվոնդո եւ հրաձգություն:

### ՖԻԴԵ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒՆԻ 6, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ 7 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

*Շախմատի միջազգային ֆեդերացիան հրապարակել է օգոստոսի վարկանիշային աղյուսակը:*

Տղամարդկանց 100 լավագույն շախմատիստների թվում, ցավոք, Վրաստանը չի ներկայացված, թեպետ կանանց նույնանման աղյուսակում տեղ են զբաղեցրել Վրաստանի վեց ներկայացուցիչներ: Ըստ զբաղեցրած հորիզոնականների՝ աղյուսակում են Նանա Ձագնիձեն (9-րդ հորիզոնական), Բելլա Խոտենաշվիլին (16), Նինո Բացիաշվիլին (17), Մերի Արաբիձեն (28), Լելա Ջավախիշվիլին (31) եւ Սալոմե Մելիան (69):

Հայաստանը ներկայացնող տղամարդ շախմատիստներից դասակարգման աղյուսակի 100 լավագույնների շարքում են Գաբրիել Սարգսյանը (47-րդ տեղ), Հայկ Մարտիրոսյանը (54), Հրանտ Մելքումյանը (94): Կանանց դասակարգման աղյուսակում են Էլինա Դանիելյանը (40), Լիլիթ Մկրտչյանը (58), Աննա Սարգսյանը (91) եւ Մարիամ Մկրտչյանը (92):

Նշենք, որ տղամարդկանց դասակարգման աղյուսակի առաջատարը մնում է աշխարհի արդեն նախկին չեմպիոն Մագնուս Կարլսենը: ԱՄՆ դրոշի ներքո հանդես եկող Լեւոն Արոնյանը դուրս է մնացել 10 լավագույնների շարքից եւ այժմ 14-րդն է:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Խորհրդային մաթեմատիկոս, երկրաֆիզիկոս Օտտո ...: 7.Հայոց թագավոր, թագավորական տոհմի հիմնադիր: 9.Ինքնավար մարզ Վրաստանում: 10.Աթեիստ: 13.Քաղվածք, մեջբերում: 14.Հովիտ, օազիս: 18.Երգիծաբան Վլադիմիր ...: 19.Ձիերի խումբ: 22.Անալի: 26.Տուրցխեցի (Ախալքալաք) գրող Գուրի ...: 27.Երկար փողոց: 28.Հոլանդացի ծովագնաց ... Տասման: 31.Քաղաք Բրազիլիայում: 33.Եթովպիայի մայրաքաղաքը՝ Ադիս-...: 36.Իրագործում: 38.Գետ Արցախում: 41.Պարտեզի այն մասը, որտեղ աճեցնում են սերմերը՝ հետո ուրիշ տեղ փոխադրելու համար: 42.Ծառի սածիլ: 45.Սուտ խոսել: 46.Հաստ ձայն: 49.Չռված, լայնորեն բացված: 50.Ազդագիր, ծանուցագիր: 51.Քաղաք Դաշտային Կիլիկիայում: 52.Հյուղակ, խրճիթ: 53.Քաղաք պատմական Արեւմտյան Հայաստանում: 54.Ցածի մասը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ավստրիացի երգահան ... Շուբերտ: 2.Անդրավարտիք, սռնազգեստ: 3.Նվիրակ: 5.Աշխատասեր միջատ: 6.Կարուձեւ անող արհեստավոր: 8.Խոշոր եղջերավոր անասունների հոտ, խումբ: 11.Մազի ներկ: 12.Անհոսք աղի լիճ Հայկական լեռնաշխարհում: 14.Մեծ օձ: 15.Տապարած, հովիվ: 16.Եվրոպական հին ոսկե դրամ: 17.Առասպել, ավանդույթ: 20.Հայդուկապետ Սեբաստացի ...: 21.«Ճառ ասե՞մ, թե՞ զանգ ...»: 23.Պոչ չունեցող: 24.Իսպանական շան տեսակ ... Սպանիել: 25.Իրաքում հարգի անուն: 29.«Ջրի ..., ջրի տարած»: 30.Անորակ, փչացած ձու: 32.Կիեւի մեծ իշխան Յարոսլավ ... (1019-1054): 34.Ճակատագիր: 35.Պետություն Աֆրիկայում ...-Ֆասո: 37.Հիմա: 39.Թակարդ: 40.Փոքրիկ Ռուբենը: 43.Լեռ Հայկական լեռնաշխարհում, Ծաղկանց լեռներում: 44.Ընտանի կենդանի: 47.Գետ Ռուսաստանում: 48.Տղամարդկային ամենացածր ու թավ ձայնը:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Արտավազդ: 4.Կումայրի: 9.Մար: 10.Դող: 11.Նաեւ: 13.Գդակ: 14.Արա: 15.Երգիր: 17.Ադանա: 19.Մկան: 20.Բարդու: 24.Տամուկ: 26.Իմանալ: 27.Ավո: 29.Ֆեն: 31.Ամուրի: 34.Սուտ: 37.Ձուգերգ: 39.Տնակ: 41.Նկարազարդ: 43.Նենե: 44.Կարեն: 46.Վեդի: 47.Լի: 48.Աբաս: 50.Տաղ: 52.Բայց: 54.Անահիտ: 55.Ադամ: 58.Իվ: 59.Ձու: 60.Ամարա: 61.Երմակ: 62.Տմարդի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Արտաշատ: 2.Տրդատ: 3.Վաղես: 4.Զանգակ: 5.Նավ: 6.Եր: 7.Սեդա: 8.Սիկոկու: 9.Մեռանի: 12.Աիդա: 16.Ռաբաթ: 18.Քույրեր: 21.Ան: 22.Րաֆֆի: 23.Դլե: 25.Աղմուկ: 28.Ոստրե: 30.Նովենց: 31.Ազնավուր: 32.Ուգանդա: 33.Իրան: 35.Ունդ: 36.Տա: 38.Գզել: 40.Կիկաբիձե: 42.Անիտա: 45.Ասատուր: 48.Աղավնի: 49.Թամամ: 51.Անի: 53.Ցամաք: 55.Ամի: 56.Դա: 57.Արտ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445